

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԱՐԹՈՒՐ ՇԱԼԻԿՈՅԻ ՔՅՅԱՆ

Տնտեսության մրցակցային միջավայրի կարգավորումը՝ որպես փոքր և միջին բիզնեսի զարգացման կարևորագույն միջոց (ՀՀ նյութերով)

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

*Գիտական ղեկավար՝* տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Սուվարյան Արզիկ Միքայելի

*Պաշտոնական ընդդիմախոսներ՝* տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝  
Ջաքարյան Արարատ Եղիշեի

տնտեսագիտության թեկնածու՝  
Գևորգյան Կարեն Արմենի

*Առաջատար կազմակերպություն՝* ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013 թվականի մայիսի 30-ին ժամը 14<sup>00</sup>-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. ապրիլի 29-ին:

014 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, տ. գ. դ., պրոֆեսոր



Ա.Լ.Ասլանյան

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

**Հետազոտության բեմայի արդիականությունը.** Տնտեսական մրցակցային միջավայրի կարգավորումը նպաստում է տնտեսական մրցակցության և, ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացման գործընթացին, քաղաքակիրթ շուկայի ձևավորմանը, բարեխիղճ մրցակցության ապահովմանը և սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

Հայաստանում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկության (ՓՄՁ) ոլորտի զարգացումը կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ հաղորդելով տնտեսությանը նորարական ուղղվածություն և ճկունություն: Այս առումով ՓՄՁ ոլորտն իր առանձնահատկություններով և հնարավորություններով նշանակալի ազդեցություն ունի երկրի սոցիալ-տնտեսական, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման վրա:

Շուկայական հարաբերությունների զարգացման համար պետությունը պետք է ստեղծի առողջ մրցակցություն և ազատ տնտեսական գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, որոնց իրականացման միջոց է տնտեսական մրցակցային միջավայրի կարգավորումը: Դրա համար պետությունը տիրապետում է բավականաչափ հստակ ու փոխկապակցված լծակների, որոնց համալիր, նպատակադրված և տնտեսապես հիմնավորված կիրառումը պետք է ուղղված լինի ինչպես տնտեսվարող սուբյեկտների, այնպես էլ ամբողջ տնտեսության բնականոն զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Կարևորելով ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը շարունակական քայլեր է իրականացնում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ:

Առանց փոքր և միջին բիզնեսի հնարավոր չէ ստեղծել արդյունավետ տնտեսություն, սեփականատերերի և ձեռնարկատերերի ընդգրկուն միջին խավ, որոնք որոշիչ դեր ունեն հասարակության կայունության ապահովման գործում: ՓՄՁ դերի բարձրացումը տնտեսության մեջ ունի օբյեկտիվ բնույթ, քանի որ վերջինիս նպատակային զարգացումն էական նշանակություն ունի սպառողական և ներդրումային ռեսուրսների պակասորդի հալթահարման, բնակչության զբաղվածության, եկամուտների ավելացման, էկոլոգիական հիմնախնդիրները որոշելիս:

Նորանկախ երկրներում փոքր և միջին կազմակերպությունները օժտված են բավականին մեծ ներուժով՝ նպաստելով միջին խավի ձևավորմանը, հասարակության մեջ ձեռնարկատիրական ոգու բարձրացմանը, տնտեսական և սոցիալական կայունության ապահովմանը: Նման երկրների համար փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը համարվում է առավել էական գործոն, ինչը կապված է նրա հետ, որ տնտեսության մեջ վերակառուցման գործընթացները ուղեկցվում են ճգնաժամային դրսևորումներով: Նման

պայմաններում հատկապես փոքր ձեռնարկատիրության դերը նշանակալիորեն բարձրանում է, բայց միևնույն ժամանակ բարդանում են նաև դրա գործունեության պայմանները:

Հայաստանը ներկայումս գտնվում է տնտեսական վերափոխումների այնպիսի փուլում, երբ անչափ կարևորվում է հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման գործոնների դերը: Դրանց ձևավորման գործում իր որոշակի տեղն ու դերը ունի տնտեսական մրցակցության պաշտպանության և ՓՍՁ-ների զարգացման արդյունավետ կարգավորման իրագործումը: Այստեղ պետության խնդիրը կայանում է նրանում, որ տնտեսական մրցակցությունը իրականացվի բարեկիրթ շրջանակներում, բացառվեն հասարակության համար վտանգավոր մենաշնորհային երևույթները և մրցակցային պայքարի անբարեխիղճ ձևերը:

ՀՀ տնտեսությունը բնորոշվում է մենաշնորհացման բարձր մակարդակով, որի հետևանքով բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ տուժում են հակամրցակցային դրսևորումների պատճառով:

ՀՀ-ում իրականացված սեփականաշնորհման գործընթացի, պետական օժանդակության և հովանավորչության շնորհիվ մի շարք տնտեսվարող սուբյեկտներ, ձեռք են բերել գերիշխող դիրք, որը հաճախ չարաշահում են իրենց շահերի համար: Ներկա պայմաններում ո՞ հայտ են գալիս առանձին շուկաների անվերահսկելի գերզբաղեցման, գնային խտրական քայլերի, ստվերային գործունեության, ներմուծող և տեղական ընկերությունների միջև անարդար մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների, համակենտրոնացումների և անբարեխիղճ մրցակցության բազմազան դրսևորումներ, որոնք էապես արգելակում են ՓՍՁ-ների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Վերոնշյալն հիմնադրույթները պայմանավորել են առենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

**Ֆետագոտության նպատակը և խնդիրները:** Առենախոսության նպատակն է հետագոտել տնտեսության մրցակցային միջավայրի կարգավորման ազդեցությունը փոքր ու միջին բիզնեսի զարգացման վրա և առաջարկել զարգացման նոր ուղղություններ: Դրված նպատակի իրագործման համար առենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել տնտեսական մրցակցության էությունը, դրսևորման ձևերը և առանձնահատկությունները,
- ուսումնասիրել տնտեսության մրցակցային միջավայրի վրա ազդող գործոնները,
- տալ փոքր և միջին ձեռնարկատիրության համեմատական բնութագիրը և իրականացնել արտերկրում կիրառվող ՓՍՁ դասակարգման չափանիշների համեմատական վերլուծություն,
- ուսումնասիրել տնտեսական մրցակցության պաշտպանության միջազգային փորձը և գնահատել ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները,
- պարզաբանել փոքր ձեռնարկատիրության սոցիալ-տնտեսական նշանակությունը և առանձնահատկությունները,

- բացահայտել ժամանակակից պայմաններում գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման առանձնահատկություններն ու օժանդակության մեխանիզմները,
- հիմնավորել գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության օժանդակության մեխանիզմների կատարելագործման ուղիները,
- վերլուծել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման հիմնական գերակայությունները և առաջարկել տնտեսության մրցակցային միջավայրի կարգավորման հիմնական ուղղությունները,
- առաջարկել փոքր ու միջին բիզնեսի զարգացման նոր մոտեցումներ:

***Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:***

Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է՝ նրանում ազատ մրցակցային պայմանների ապահովման և տնտեսական մրցակցային միջավայրի կարգավորման հիմնահարցերի համալիրով: Հետազոտության առարկան տնտեսական մրցակցային միջավայրի կարգավորման համակարգի իրագործման հիման վրա փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրների մշակումն է:

***Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվության ապահովումը:***

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տեսության դասական և ժամանակակից տեսությունների հիմնարար դրույթները, անցումային և շուկայական տեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական մրցակցային միջավայրի կարգավորման տեսական և մեթոդական հարցերին նվիրված աշխատությունները: Հետազոտության հիմքում դրվել են ՀՀ Զաղաքացիական օրենսգիրքը, «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության այս ոլորտին առնչվող համապատասխան որոշումները, միջազգային կազմակերպությունների կազմակերպած գիտաժողովների, սեմինարների նյութերը և նրանց կողմից մշակված մեթոդական ձեռնարկներն ու ցուցումները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության, ՀՀ ՏՄԴԳՀ-ի, ՀՀ Էկոնոմիկայի Մախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութերն ու տվյալները:

Կիրառվել են ուսումնասիրության վիճակագրական և խմբավորման, համակարգային, համեմատական և տրամաբանական վերլուծության մեթոդներ:

***Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:***

Ատենախոսության հիմնական արդյունքներից գիտական նորույթ են.

1. Առաջարկվում է օրենսդրական կարգով սահմանափակել խոշոր տնտեսավարող սուբյեկտների ուղղահայաց ինտեգրման գործունեության շրջանակները և այնպիսի գործունեությամբ զբաղվելու ոլորտները, որոնց արտադրատեխնոլոգիական և կազմակերպչական առանձնահատկությունները տնտեսության մրցակցային միջավայրում հնարավորություն են տալիս դրանք իրականացնել գերփոքր և փոքր ընկերությունների չափորոշիչների պայմաններում:

2. Մշակվել է արտահանման «պետություն-մասնավոր» խառը համակարգ, որտեղ պետությունը կատարում է ներդրում նոր ստեղծված ընկերության

կանոնադրական կապիտալում, վերահսկում է որակի միջազգային ստանդարտների ապահովումը, հիմնադիր ՓՄՁ-ները իրականացնում են արտադրանքի թողարկումը կամ ծառայության մատուցումը, իսկ նոր ստեղծված ընկերությունը իրականացնում է ապրանքների ու ծառայությունների արտահանման հետ կապված ամբողջ գործունեությունը:

3. Առաջարկվել է ներդնել «ընտանեկան ծեռնարկատիրություն» իրավական հասկացությունը, որի մեջ կներառվեն այն բիզնես միավորները, որոնց բոլոր մասնակիցները կլինեն մեկ ընտանիքի անդամներ և չեն օգտագործում ներգրավված վարձու աշխատուժ:

4. Առաջարկվել է ձևավորել վիճակագրական տեղեկատվական համակարգ, որը իր մեջ կներառի՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ռեստրում գրանցված կազմակերպությունների հաշվետվությունները (չրջանառության ծավալները (բնեղեն և դրամային արտահայտությամբ), աշխատակիցների միջին ցուցակային թիվը, վճարված հարկերը, արտահանման և ներմուծման տեսակարար կշիռը ընդհանուր արտադրանքի մեջ և այլն) և ՓՄՁ-ների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն (տեսակարար կշիռը ՀՆԱ-ի, զբաղվածության, ներմուծման և արտահանման, վճարված հարկերի, ներդրումների, ինչպես նաև պետության կողմից իրականացված գնումների մեջ):

***Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:***

Աշխատանքում կատարված գիտատեսական ընդհանրացումները ու առաջարկությունները կարող են կիրառվել տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգի կատարելագործման, տնտեսական մրցակցային միջավայրի կարգավորման քաղաքականության և ռազմավարության մշակման, ՓՄՁ-ների կարգավորման արդյունավետության բարձրացման նպատակով:

***Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:***

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամում, Էկոնոմիկայի նախարարության ՓՄՁ զարգացման վարչությունում, «Մխիթար Գոշ» համալսարանում և հրապարակվել են 4 գիտական հոդվածում:

***Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:***

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքը պարունակում է 11 աղյուսակ, 10 գծապատկեր և 4 հավելված: Աշխատանքի ծավալը կազմում է 147 էջ՝ առանց հավելվածների:

## Ատենախոսության հիմնական բովանդակությունը

**Ներածությունում** հիմնավորվել են թեմայի արդիականությունը ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ստացված հիմնական տեսական ու գործնական արդյունքները, ինչպես նաև գիտական նորույթն ու դրա գիտագործնական նշանակությունը, կիրառման հնարավոր ուղղությունները և կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսության մրցակցային միջավայրի էությունը և փորքն ու միջին բիզնեսի տեղը շուկայական տնտեսության համակարգում»** ներկայացվել է տնտեսական մրցակցության էությունը, դրսևորման ձևերը և առանձնահատկությունները շուկայական տնտեսական համակարգում:

Աշխատանքում քննարկվել է մրցակցային միջավայրի դասակարգման տարբեր մոտեցումներ և առանձնացվել մրցակցային միջավայրի 3 տեսակ՝ կատարյալ մրցակցային միջավայր, գոտ մենաշնորհներ, որպես օրինակ կարելի է դիտարկել բնական մենաշնորհներ, և ոչ կատարյալ մրցակցային միջավայր: Հարկ է նշել, որ ոչ կատարյալ մրցակցային շուկայի տնտեսվարող սուբյեկտները դասակարգվում են 4 հիմնական խմբերի՝ մենաշնորհ, դոտպոլիս /երկիշխանություն/, օլիգոպոլիս /սմբիշխանություն/ և մենաշնորհային մրցակցություն, որոնք մեկը մյուսից տարբերվում են գների վրա վերահսկողության աստիճանով: Մենաշնորհային մրցակցության տեսությունը մշակվել է Է. Չեմբերլինի կողմից<sup>1</sup>: Նա ուշադրություն դարձրեց, որ ապրանքի դիֆերենցումը հանգեցնում է նրան, որ միասնական շուկայի փոխարեն ձևավորվում է մասամբ հարմարված, բայց փոխադարձ կախվածությամբ շուկաների ցանց: Ըստ Ա. Պիգուի «Մենաշնորհային մրցակցությունը մրցակցություն է մի քանի վաճառողների միջև, որոնցից յուրաքանչյուրը արտադրում է ամբողջ թողարկվող արտադրանքի նշանակալի չափաբաժինը»<sup>2</sup>: Սկզբնական շրջանում մենաշնորհներն առաջացել են որպես տեղական, այնուհետև՝ որպես ազգային, իսկ այժմ նաև՝ համաշխարհային երևույթներ: Դրանցից յուրաքանչյուրը կարող է լինել տարբեր, օրինակ՝ փակ և բաց<sup>3</sup>, բնական և արհեստական: Տարբերվում են նաև մենաշնորհների մասնավոր (տնտեսական) և պետական (վարչական), հասարակ և երկակի, վարչական և տեխնոլոգիական, վերագրային և միջագրային և այլ տեսակներ: Ըստ գործունեության ոլորտի մենաշնորհները լինում են՝ վարկային, առևտրային և արդյունաբերական<sup>4</sup>:

Վ. Պետին մեծ ուշադրություն էր դարձնում հայտնագործություններ անողների մենաշնորհի մասին, նշելով նաև այն տխուր փաստը, որ հայտնագործություն արածներից քչերն են, որոնք երբևէ պարգևատրվել են մենաշնորհի արդյունքով:

<sup>1</sup> Տես Чемберлин Э., Теория монополистической конкуренции, Реориентация теории стоимости, М., 1996г. էջ 87

<sup>2</sup> Տես Пигу А., Экономическая теория благосостояния, Т.1, М., 1985г. էջ 327

<sup>3</sup> Տես Хайман Д., Современная микроэкономика: анализ и применение, Т.2, М., 1992г. էջ 4

<sup>4</sup> Տես Войтов А., Экономика: Общий курс (Фундаментальная теория экономики), Учебник 3-е переработанное изд., М., Информационно-внедренческий центр Маркетинг, 2005г. էջ 209-212

Հատկանշական է նրա դիտողությունը հայտնագործողների ղօգոհությունների վերաբերյալ այն մասին, որ դրանք, սովորաբար, մահանում են իրենց հետ: Ներկայումս տնտեսական զարգացման գործում հայտնագործության մենաշնորհի ձեռք է բերում որոշիչ նշանակություն<sup>5</sup>:

Մեր կողմից ներկայացվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, քննարկվել են անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների, համակենտրոնացումների և գերիշխող դիրքի չարաչափման հիմնախնդիրները:

Աշխատանքում վերլուծվել է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, ՌԴ-ի տնտեսական մրցակցության պաշտպանության փորձը, որից կարելի է ենթադրել, որ բեն արևմտյան երկրների և ՌԴ-ի հակամենաշնորհային օրենքները հիմնականում կրկնում են ամերիկյան հակատրեստային օրենսդրության սկզբունքներն ու գաղափարները, սակայն դրանք բովանդակում են նաև էական տարբերություններ:

Այդպիսի տարբերությունների պատճառը երկակի է Արևմտյան Եվրոպայում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը տիրապետում էին մենաշնորհային կազմակերպությունները և դրանց գործունեությունը պաշտպանող օրենքները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ամերիկյան մոդելով ընդունելով հակամենաշնորհային օրենքներ, այդ երկրները, այնուհանդերձ, մասամբ հավատարիմ են մնացել իրենց պատմական ավանդույթներին:

Երկրորդ պատճառը, որ լայն տարածում է գտել Արևմտյան Եվրոպայում, այն համոզմունքն է, որ հակամենաշնորհային օրենքների հաստատական կատարումը կարող է բերել նրանց տնտեսության արդյունավետության թուլացմանը՝ ի տարբերություն ԱՄՆ-ի: Ուստի, ձևականորեն պահպանելով հակամենաշնորհային օրենքի տառը, Արևմտյան Եվրոպայի երկրներում առավել ազատական մոտեցում են ցուցաբերում մենաշնորհային գործունեությանը:

Շամանակակից պայմաններում մասնագիտական գրականության մեջ լայն կիրառում են ստացել «ձեռնարկատիրություն» և «ձեռնարկատեր» հասկացությունները, որոնք սակայն մեկնարանվել են տարբեր կերպ: Աշխատանքում քննարկվել են «ձեռնարկատիրություն» և «ձեռնարկատեր» հասկացությունների վերաբերյալ մերկանտիլիզմի ներկայացուցիչ Ռիչարդ Կաննիլոնի<sup>6</sup>, դասականներից՝ Ադամ Սմիթի և Շամ Բատիստ Մեյի, մեղադատական ուղղության ներկայացուցիչ Ա.Մարշալի<sup>7</sup> և Յ.Խ Թյունեն<sup>8</sup> տեսակետները: Ձեռնարկատիրության մեջ քննարկվող հիմնախնդրի շարունակությունը և զարգացումը կարող ենք համարել Պ. Դրուկերի

<sup>5</sup>Stu Прикин В., Микроэкономика в таблицах и графиках:Учебник для вузов,М.,Юнити,1999г. էջ .219

<sup>6</sup>Stu Aidis R., Entrepreneurship and Economic Transition: Tinbergen Institute Discussion Paper. – Amsterdam: “Tinbergen Institute”, 2003, էջ 29  
<http://www.tinbergen.nl/discussionpapers/03015.pdf>.

<sup>7</sup>Stu Маршалл А., Принципы экономической науки. Том 2. – Москва: Прогресс, 1993, 310 с. Aidis R. Entrepreneurship and Economic Transition: Tinbergen Institute Discussion Paper. – Amsterdam: “Tinbergen Institute”, 2003, էջ 29

<sup>8</sup>Stu Колесникова Л.А., Предпринимательство и малый бизнес в современном государстве: управление развитием. – М., «Новый Логос», 2000, էջ 269



տեսակետը, ըստ որի ձեռնարկատերը անհատն է, որն օգտագործում է նոր հնարավորությունն առավելագույն օգուտով: Ձեռնարկատիրոջ գործունեության արտաքին միջավայրի հետազոտումն իրականացվել է Ֆ.Նայթի կողմից՝ «Ռիսկ, անորոշություն և շահույթ» աշխատության մեջ: Ըստ այս հետազոտողի տեսակետի՝ միջավայրի բնութագրիչներից գլխավորը անորոշությունն է, որը պայմանավորում է տնտեսական համակարգի բոլոր մակարդակներում տեղեկատվության անորոշություն, և համապատասխանաբար, պլանավորման, որոշումների ընդունման, գործողությունների իրականացման ռիսկ: Հենց ռիսկը հաշվի առնելն ու այն նվազեցնելը հնարավորություն է ընձեռնում հաջողակ ձեռնարկատերերին ստանալու միջինից բարձր շահույթ՝ նույնիսկ կատարյալ մրցակցության պայմաններում:

Հետազոտողներ Լ. Միգեսը<sup>9</sup> և Ֆ.Հայեկն<sup>11</sup> առաջին անգամ դիտարկել են ձեռնարկատիրությունը, որպես գաղափարի զարգացման գործընթաց: Հետագայում ամերիկյան տնտեսագետ Ի.Կիրցները կառուցեց ձեռնարկատիրության տեսությունը՝ որպես «տնտեսական գործարքների» հավասարակշիռ մի վիճակից մյուսին անցման գործընթաց:

Մասնագիտական գրականության և պրակտիկ գործունեության մեջ առկա չեն փոքր և միջին կազմակերպությունների դասակարգման միասնական չափանիշները: ՓՄՁ կազմակերպությունների դասակարգման չափանիշների ընտրության դեպքում օգտագործվում են երեք հիմնական՝ քանակական, որակական և կոմբինացված մոտեցումներ: Հարկ է նշել, որ մի շարք երկրներում փոքր բիզնեսը միավորված է միջին բիզնեսի հետ մեկ միասնական խմբում:

Կազմակերպությունները «փոքր», «միջին» և «խոշոր» չափերի դասակարգելու փորձ իրականացվել է ամերիկյան գիտնական Վան Խորնի կողմից՝ արդյունքների կամ գործունեության բնույթի վրա կազմակերպության չափերի ազդեցության բացահայտման միջոցով, միաժամանակ շանտեսելով զարգացման բնութագրական փուլերը:

Որակական մոտեցման դասական օրինակ է անգլիացի հետազոտող Վելուի մոտեցումը<sup>12</sup>, որը հիմնվել է կազմակերպության աճի և զարգացման գործընթացների հետազոտման վրա:

Համալիր մոտեցումը ենթադրում է փոքր և միջին կազմակերպությունների բնորոշման համար միաժամանակ քանակական և որակական չափանիշների օգտագործում: Համալիր մոտեցման առավել հայտնի բնորոշումներից է Բուլթոնյան Կոմիտեի կողմից ներկայացված տարբերակը<sup>13</sup>, ըստ որի առաջարկվել են այսպես

<sup>9</sup> Стu Paдыгин Б., Махмудова М. Переходная экономика. Учебное пособие/научный редактор А.Н. Силин. – Тюмень, 2003, էջ 32-35.

<sup>10</sup> Стu Мизес Л., Всемогущее правительство. Тотальное государство и тотальная война — Челябинск: Социум, 2006, էջ 466

<sup>11</sup> Стu Хайек Ф., Индивидуализм и экономический порядок. – М.: Изограф, 2000, էջ 256

<sup>12</sup> Стu Колесникова Л.А., Предпринимательство и малый бизнес в современном государстве: управление развитием. – М., «Новый Логос», 2000, էջ 129.

<sup>13</sup> Стu Tonge J. A., Review of Small Business Literature. Defining The Small Business//Manchester Metropolitan University Business School Working Paper Series. –Manchester: Manchester

կղզված «տնտեսական» և «վիճակագրական» չափանիշները: Համաձայն տնտեսական բնորոշման փորր կազմակերպությունները պետք է բավարարեն հետևյալ երեք պահանջներին:

- իրացման ոչ մեծ շուկան, որը հնարավորություն չի բնձնում կազմակերպությանը ողողակի ազդեցություն ունենալ իրացվող ապրանքների գներին և ծավալի վրա,

- կազմակերպության կառավարումն իրականացվում է սեփականատիրոջ (կամ սեփականատերերի) կողմից անձամբ, այլ ոչ թե ձևավորված կառավարման ապարատի միջոցով.

- կազմակերպությունը համարվում է անկախ այն իմաստով, որ իրենից չի ներկայացնում խաշոր կազմակերպության մաս:

Փոքր և միջին բիզնեսի բնորոշման վերլուծված չափանիշները տարբերվում են ոչ միայն ըստ երկրների, այլև երկրների ներսում՝ ըստ գործունեության ձևերի ու հիմնական տնտեսական ցուցանիշների (աղյուսակ 1): Ամրագրելով նշված փաստարկը, մենք նույնպես համակարծիք ենք Ա.Բլիմովի տեսակետին<sup>14</sup>, ըստ որի ցանկացած բնորոշում տրվում է գործնական կարիքներից կախված և ծառայում է որոշակի նպատակների: Չմայած դասակարգման չափանիշների միջև նկատված տարբերություններին, գոյություն ունեցող բնութագրությունները հնարավորություն են ընձեռնում տարբերակել փոքր և միջին բիզնեսը՝ որպես հետազոտման օբյեկտ, ինչպես նաև պարզաբանել ժամանակակից տնտեսության մեջ վերջինիս դերը:

Աշխատանքի երկրորդ՝ **«ՀՀ տնտեսության մրցակցային միջավայրը և փոքր ու միջին բիզնեսի զարգացման ուղիների վերլուծությունը»** գլխում ներկայացվել է ՀՀ տնտեսության իրավատնտեսական կարգավորումը և կատարվել է օրենսդրական դաշտի վերլուծություն: Ներկայումս մեր հանրապետության տնտեսությունը բնութագրվում մենաշնորհացման բարձր մակարդակով:

Բազմաթիվ շուկաների կառուցվածքների հետազոտությունները վկայում են հանրապետության բավական կենտրոնացված տնտեսության առկայության մասին: ՀՀ ՏՄՊՊՀ-ի կողմից 2000-2010թ-ների ընթացքում ուսումնասիրված 67 ապրանքային շուկաներից 47-ը բարձր կենտրոնացված են, 16-ը՝ միջին և միայն 4-ը՝ ցածր: Շուկաների կենտրոնացվածության բարձր մակարդակը լուրջ խոչընդոտ է ՓՄՁ-ների կարգացման համար(գծապատկեր 1): Երբ ապրանքային շուկաների մեծ մասի հիմնական դերակատարները 2-3 տնտեսվարող սուբյեկտներ են, ապա ՓՄՁ-ները մեծ դժվարությունների են հանդիպում շուկա մուտք գործելու համար:

Փաստորեն, ճերկայումս խոսք չի կարող գնալ արդյունավետ մրցակցային միջավայրի մասին, որի հիմնական պատճառը, մեր կարծիքով, հակամենաշնորհային կարգավորման խիստ անբավարար մակարդակն է:

Նշենք, որ չի կարելի վերացնել մենաշնորհը արհեստական ճանապարհներով, այլ անհրաժեշտ է ակտիվորեն աջակցել շուկայի մյուս մասնակիցներին: Մեր հանրապետությունում նման ճանապարհներից մեկը, որի համար առկա են

<sup>14</sup> Ств Блинов А.О., Малое предпринимательство. Организационные и правовые основы деятельности. – 2-е изд. – Москва: «Ось-89», 1998, էջ 336

գարգացման լուրջ նախադրյալներ, փոքր և միջին ձեռնարկատիրության կայացման պետական աջակցությունն է, որի ուղղությամբ ներկայումս կատարվում են բավական ծավալուն աշխատանքներ:

Աղյուսակ 1

ՓՄՁ-ների դասակարգման չափանիշները տարբեր երկրներում


| Երկրի անվանումը               | Աշխատողների միջին ցուցակային թիվը (մարդ)          | Հասույթը   | Ակտիվների մեծությունը                   |
|-------------------------------|---|--|---|
| Եվրոպական հանձնաժողովի կողմից | մինչև 249   | չի գերազանցում 53 մլն. եվրոն                       | չի գերազանցում 43 մլն. եվրոն            |
| Մեծ Բրիտանիայում              | մինչև 250   | չի գերազանցում 22.8 մլն. ֆունտ ստեռլինգը           | չի գերազանցում 11.4 մլն. ֆունտստեռլինգը |
| ԱՄՆ                           | 100-1000 մարդ կախված ոլորտային պատկանելիությունից | 0,75 մինչև 28,5 մլն. դոլար                         | .....                                   |
| Ճապոնիա                       | 50-300 կախված ոլորտային պատկանելիությունից        | 50-300 մլն իեն կախված ոլորտային պատկանելիությունից | .....                                   |
| Մակեդոնիա                     | 50  | 1.5 մլն եվրոն                                      | 1.1 մլն եվրոն                           |
| Ֆինլանդիա                     | 250   | 230մլն.ֆիննական մարկ                               | .....                                   |
| Շվեդիա                        | 250   | 40 մլն. եվրոն                                      | 27 մլն. եվրոն                           |
| ՌԴ                            | 100   | 400 մլն ռուբլի                                     | .....                                   |

Դեռևս այս ոլորտում պետական ներդրումների ծավալը հեռու է բավարար լինելուց, սակայն տարեցտարի իրականություն է դառնում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծավալների ավելացումը, որն ապահովվում է փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության տարեկան ծրագրերով:

Մեր կարծիքով, փոքր և միջին ձեռնարկատիրության լայնամասշտաբ գարգացմանը խոչընդոտող առկա հիմնախնդիրներն են՝ ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը, ներքին շուկայի ոչ բավական բարձր գնողունակությունը և արտահանման հնարավորությունների սակավությունը, առավել խոշոր մրցակիցների կողմից մենաշնորհային ազդեցությունը, բյուրոկրատիան, կոռուպցիան:

Միայն նպատակամղված և արդյունավետ տնտեսական մրցակցային քաղաքականության իրականացման միջոցով հնարավոր կլինի ապահովել բարեփոխումների բարեհաջող ընթացքը, սակայն այդպիսի քաղաքականությունը ներկայումս մշակված չէ:

Շուկայական տնտեսության պետական կարգավորման կարևոր տարրերից են ազգային տնտեսության շրջանակներում ՓՄՁ ֆինանսական օժանդակության համար կիրառվող մեթոդներն ու գործիքները, որոնց համեմատական վերլուծությունն էլ ներկայացված է աշխատանքում: Զննարկվել է ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆինլանդիայի, Չինաստանի, Ճապոնիայի և Ռուսաստանի Դաշնության փոքր և միջին ձեռնարկատիրության պետական օժանդակությունն մեթոդները և առանձնահատկությունները:



**Գծապատկեր 1.** Մի շարք պարանքային շուկաների կենտրոնացվածության վերլուծությունը ըստ տարիների

Իրականացվել է փոքր բիզնեսի բնութագրական SWOT վերլուծությունը (աղյուսակ 2):

Բերվածից հետևում է, որ փոքր կազմակերպությունները դրսևորում են էական դրակական առավելություններ, որոնք արտացոլում են դրանց ուժեղ կողմերը: Հետևաբար, փոքր կազմակերպությունների հնարավորությունների աճի ավելացման և ռիսկի նվազեցման, դրանց օժանդակության մեթոդների ու մեխանիզմների մշակման համար անհրաժեշտ է հաստատել հստակ սահմաններ մաս փոքր և միջին բիզնեսի միջև: Փոքր կազմակերպությունները նպաստում են տնտեսության կառուցվածքի բազմազանեցմանը: Դրանք, ի տարբերություն խոշորների, կարող են ավելի արագ ծածկ յուրացնել գործունեության նոր ձևերը, նոր արտադրատեսակների արտադրությունը և ծառայությունների մատուցումը:

Առավել արդյունավետ բազմազանեցման գործընթացն իրականացվում է խոշոր և միջին կազմակերպությունների հետ սերտ համագործակցության դեպքում:

Աշխարհի զարգացած և զարգացող երկրներում փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների ավանդը տարբեր ոլորտներում բավականին նշանակալի է: Փոքր կազմակերպություններն արագ արժագանքում են սպառողների պահանջարկին, նպաստում են նոր արտադրատեսակների ստեղծմանը և ծառայությունների մատուցմանը, համարվում են գործազրկության դեմ պայքարի կարևոր գործիք, ներագրում են արտառեսուսման աճին, հնարավորություն են ընձեռում նվազեցնելու բնակչության տարբեր խավերի միջև եկամտատնտեսի անհամամասնությունն, զարգացնում և ներդրում են նորագույն տեխնոլոգիաների տարբեր ձևերը, հանդես են

գալիս խոշոր կազմակերպությունների համար ենթակապալառուի դերում, բարձրացնում են բնական ռեսուրսների օգտագործման մակարդակը և, ըստ էության, հնարավոր են դարձնում ձեռնարկատերի ամբողջ ունակությունների և տաղանդի քաջահայտումը:

## Աղյուսակ 2

### Փոքր բիզնեսի բնութագրական վերլուծությունը


| Փոքր բիզնեսի ուժեղ կողմերը  | Փոքր բիզնեսի թույլ կողմերը              | Փոքր բիզնեսի հնարավորությունները   | Փոքր բիզնեսի գոյատևման վտանգները                           |
|-----------------------------|---|------------------------------------|--|
| Մեկնարկային և փոքր կապիտալը | Սահմանափակ շուկան                       | Մինչև խոշոր բիզնեսի մակարդակ աճելը | Ամբողջական քայքայման արագությունը                          |
| Բարձր արդյունավետությունը   | Աճի սահմանափակ հեռանկարները             | Հավասարակշռված զարգացումը          | Աճի գազաբնակետին արագ հասնելը                              |
| Ծկունությունը               | Արտաքին միջավայրից բարձր կախվածությունը | Մեփական շուկայում ամուր դիրքը      | Մրցակցի կողմից զբաղեցրած շուկայական հատված հեշտ ներխուժելը |
| Ինքնուրույնությունը         | Ազդեցիկ օժանդակության բացակայությունը   | Նոր գաղափարների իրականացումը       | Ուժային ճնշումների փորձերից կախվածությունը                 |

Հայաստանում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտի զարգացումը կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ հաղորդելով տնտեսությանը նորարարական ուղղվածություն և ճկունություն: Այս առումով ՓՄՁ ոլորտն իր առանձնահատկություններով և զարգացման հնարավորություններով այն անկյունարարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա և ապահովում է զգալի սոցիալ-տնտեսական արդյունք, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացում:

Կարևորելով ՓՄՁ ոլորտի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ ՀՀ կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ:

Չնայած պետության կողմից կարևորվում է ՓՄՁ-ների դերը ՀՀ տնտեսության զարգացման և կայունության ապահովման գործում, բայց մինչև այսօր մենք չունենք փիճակագրական բավարար տվյալներ ՓՄՁ-ների վերաբերյալ: Իսկ 2009թ.-ից հետո

բացակայում են նաև փորձագիտական գնահատականները: Ստորև ներկայացված գծապատկերը կազմվել է ՓՄՁ ԶԱԿ-ի, ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի և Լոզիկոն ՄՊԸ –ի փորձագետների կողմից ստացված տվյալների հիման վրա(գծապատկեր 2): Տեղեկատվական համակարգի ձևավորումը ներկայումս փորքր և միջին ձեռնարկատիրության վիճակի գնահատման կարևորագույն պայման է և անհրաժեշտ է մշակել համապատասխան մեթոդաբանություն տեղեկատվական բազայի ձևավորման համար:



**Գծապատկեր 2. ՓՄՁ-ների զարգացման տնտեսական ցուցանիշների դինամիկան 2005-2009թթ.**

Ինչպես երևում է ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ՀՆԱ-մեջ հինգ տարիների ընթացքում կայուն աճ է արձանագրել, որը կազմում է 2.7 տոկոսային կետ: Ինչը վատ ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք նաև համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը: 2005-2009թթ ՀՆԱ-ի և զբաղվածության մեջ ունենք ՓՄՁ-ների տեսակարար կշռի աճ, ինչը միանշանակ դրական երևույթ է:

Հաշվի առնելով ՀՀ շուկայի փոքր ծավալները կարևորվում է նաև ՓՄՁ-ների ներգրավումը արտաքին առևտրի մեջ: ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ընդհանուր գումարում դեռևս էական դեր չեն զբաղեցնում:

Աշխատանքի երրորդը՝ *«Տնտեսության մրցակցային միջավայրի բարելավման և փոքր ու միջին բիզնեսի զարգացման արդի հիմնախնդիրները»* գլխում ներկայացվել է մրցակցության կարգավորման և ՓՄՁ-ների զարգացման նոր մոտեցումներ: Տնտեսության մրցակցության կարգավորման մեթոդաբանական հիմքերի, աշխարհում դրա կատարելագործման ընդհանուր միտումների և հսկամենաշնորհային արդյունավետ կարգավորում իրականացնող երկրների փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև Հայաստանում այդ ոլորտի վիճակի համալիր վերլուծությունը ցույց են տալիս, որ հսկամենաշնորհային կարգավորման ժամանակակից մակարդակին մոտենալու համար անհրաժեշտ է հսկայական աշխատանք կատարել տնտեսության բոլոր մակարդակներում և բազմաթիվ ուղղություններով: Առկա հիմնահարցերը այնքան բազմազան են, որ, ըստ էության, անհնար է դրանց արդյունավետ լուծումները

գտնել առանց համալիր մոտեցման և համապատասխան պետական քաղաքականության ու ռազմավարության մշակման:

Հարկ է նշել, որ չնայած «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը հանդիսանում է հակամենաշնորհային քաղաքականության հիմնաքարը, քաղաքականության իրագործումը ներառում է շատ ավելի լայն միջոցառումների մշակում և կիրառում, որոնք պետք է համահունչ լինեն քաղաքականության գերակայություններին:

Հակամենաշնորհային քաղաքականության իրականացման ժամանակ անհրաժեշտ է մշակել և իրագործել «ապամենաշնորհացման» տարրեր ծրագրեր, որոնք կազմում են հակամենաշնորհային քաղաքականության անբաժանելի մասը: Սակայն նշենք, որ ապամենաշնորհացումը, իր արդիականությամբ հանդերձ, չի կարելի հասկանալ որպես շուկայում մենաշնորհ դիրք ունեցող ընկերությունների պարզ «մասնատում»: Ժամանակակից ընկալմամբ՝ ապամենաշնորհացումը իրենից ներկայացնում է միջոցառումների լայն համախումբ՝ ուղղված համալեռնությունացման մակարդակի նվազեցմանը և մրցակցության զարգացմանը արհեստականորեն մենաշնորհացված ոլորտներում: Այդ միջոցառումները անպայման պետք է ստուգված լինեն «մի վնասիք» սկզբունքից ելնելով:

Անհրաժեշտ է մշակել համապատասխան սկզբունքներ ապրանքային նշանների գրանցման ժամանակ բարեխիղճ մրցակցության կանոնների ապահովման և առանց գրանցված ապրանքային նշանների ապրանքների արտադրության արգելման համար: Հաճախ, հատկապես ակոնոլային խմիչքների շուկայում, կարելի հանդիպել ապրանքների, որոնց անվանումները տարբերվում են մեկ տառով կամ շատ նման դիպայն ունեն, ինչը սպառողներին կարող է շփոթության մեջ գցել: Նման դեպքերը հայտնաբերվելու կամ համապատասխան բողոքների առկայության պարագայում քննվում է ՀՀ ՏՄՊՎՀ-ի կողմից և նշանակվում պատժամիջոցներ, բայց նման դեպքերը շատ հաճախ են կրկնվում և ոչ միշտ է հնարավոր լինում պարզել հասարակության և տնտեսվարող սուբյեկտներին հասցված իրական վնասի չափը: Ապրանքային նշանների պարտադիր գրանցման պարագայում հնարավոր կլինի բացառել նման դեպքերը:

ՓՄՁ-ների զարգացման նոր հնարավորություններ ստեղծելու համար առաջարկվում է, որ խոշոր տնտեսվարող սուբյեկտներին արգելվի զբաղվել ուղղահայաց ինտեգրման որևէ գործունությամբ, գնել ՓՄՁ սուբյեկտներ, զբաղվել գործունությամբ, որը իր արտադրատեխնոլոգիական և կազմակերպական առանձնահատկություններով հնարավոր է իրականացնել գերփոքր և փոքր ընկերությունների չափորոշիչների պայմանում: «Պետք է սահմանել, որ խոշոր ընկերությունների մասնակիցները չեն կարող ունենալ որևէ մասնակցություն ՓՄՁ սուբյեկտներում: Բացառություն կարող են հանդիսանալ այն գերփոքր և փոքր ընկերությունները, որոնց արտադրանքի կամ մատուցված ծառայությունների մեծ մասը արտահանվում է: Իսկ արդեն գոյություն ունեցող ընկերությունների համար կարելի է սահմանել ժամանակացույց, որպեսզի վերջիններս ունենա հնարավորություն վերածվելու արտահանող ընկերությունների կամ վաճառվեն: Մասնավորապես, առևտրային խոշոր ցանցերը (սուպերմարկետները), որոնք ունեն գերիշխող դիրք չեն կարող զբաղվել հացաբուլկեղենի և հրուշակեղենի կամ այլ ապրանքների արտադրությամբ, կամ գինի արտադրող խոշոր ընկերությունները»:

խաղողագործությանը, կաթնամթերք և մսամթերք արտադրող ընկերությունները՝ անասնապահությանը, պահածոներ արտադրողները՝ հողագործությանը, և այլն:

Նման մոտեցումը, նոր հնարավորություն կտա գերփոքր և փոքր ընկերություններին զարգանալ տեղական շուկայում՝ չվախենալով խոշոր բիզնեսի հետ անհավասար մրցակցությունից: Անգամ, եթե խոշոր բիզնեսը մտնելով ՓՄՁ բիզնեսի ոլորտ, չի խախտում որևէ օրենք, միևնույն է տվյալ ոլորտում գործող ՓՄՁ-ները հայտնվում են անհավասար մրցակցային պայմաններում՝ ստիպված լինելով մրցակցել առեղծված ֆինանսական և մարդկային ռեսուրս ունեցող խոշոր ընկերությունների հետ: Խոշոր ընկերությունները ստիպված կլինեն կենտրոնանալ արտահանման վրա, քանզի այդ ոլորտում որևէ սահմանափակում չի լինի, ավելին, կան գործող հարկային արտոնություններ: Իսկ եթե ամեն դեպքում խոշոր բիզնեսի ներկայացուցիչները կորոշեն գործունեություն ծավալել տեղական շուկայի նոր ոլորտներում, ապա պետք է կատարեն խոշոր ներդրումներ, ինչը վեր է ՓՄՁ սուբյեկտների ուժերից:

Ժամանակակից պայմաններում աշխարհի մեծ թվով երկրների համար բնութագրական է այնպիսի իրավիճակը, երբ փոքր և միջին կազմակերպությունները մեծամասամբ աշխատում են ներքին շուկայի պահանջարկների բավարարման, իսկ խոշորները՝ արտաքին շուկաների համար: Սակայն, համաշխարհային տնտեսության գլոբալացումը ՓՄՁ ոլորտի առջև բացել է բիզնեսի զարգացման ռազմավարական այլընտրանքային ուղիներ: Ժամանակակից պայմաններում տնտեսապես զարգացած երկրներում տարածում է ստացել «փոքր բազմազգային կազմակերպություն» հասկացությունը, որը ներառում է մի քանի երկրների շուկաներում գործունեություն իրականացնող փոքր կազմակերպությունները<sup>15</sup>:

Փոքր կազմակերպությունների մուտք միջազգային շուկա դարձել է ժամանակակից գործարար գլոբալացման հիմնական գծերից մեկը<sup>16</sup>:

Ոչ մի փոքր և միջին կազմակերպություն չի կարող սկսել արտահանման գործունեություն առանց յուրացնելու կառավարման, արտադրության գաբրզացման նվազագույն մակարդակ ապահովող նորայինները, հաստատելով միաժամանակ ֆինանսատնտեսական բավարար կայունություն: Արտաքին առևտրատնտեսական գործունեության վերլուծաբանները կարևորում են փոքր և միջին կազմակերպությունների արտահանման գործում վարչարարական բնույթի խոչընդոտները<sup>17</sup>:

Ըստ մեկ այլ վերլուծաբանի՝ Ֆ.Ռուսոյի՝<sup>18</sup>՝ փոքր և միջին բիզնեսի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններից են.

<sup>15</sup> Stu Campbell A., The Trend of the Micro-Multinationals// Globalization, Startup Trends, 20/2/2007. էջ 176 – <http://www.smallbiztrends.com/2007/02/the-trend-of-themicro-multinationals.html/>

<sup>16</sup> Стu Малый бизнес в СНГ и Восточной Европе: трудности роста (середина –вторая половина 90-х гг.)/ Библиотека малого предпринимательства. Выпуск 3. – Москва: РНИСиНП, 1997, էջ 362 - 386.

<sup>17</sup> Стu Small and medium sized business in the context of WTO reform. - Thunder Lake Management Inc. Brief, [www.thunderlake.com/briefings/smes.doc](http://www.thunderlake.com/briefings/smes.doc)

<sup>18</sup> Стu Russo F., Cluster and Export Consortia Development / International Clustering Conference, Istanbul, 25-26 May 2006, [www.clustering06.com/pdf/WS-2/Mr\\_.pdf](http://www.clustering06.com/pdf/WS-2/Mr_.pdf)



- շուկայի թույլ իմացությունը և ֆինանսների անբավարարությունը,
- արտադրվող արտադրանքի որակի, քանակի և տեսականության համահասպատասխանությունը արտերկրյա գնորդների պահանջմունքներին,
- անհամապատասխանությունը տեխնիկական և էկոլոգիական ստանդարտներին.
- նոր կապերի հաստատման համար նորարարության բացակայությունը:

Ուսումնասիրելով Բուլղարիայի, Լեհաստանի, Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի ՓՄՉ ոլորտը, Դ. Սմալթոնեն հանգել է այն տեսակետին<sup>19</sup>, որ այս երկրներում խոչընդոտող գործոններ են հարկերի բարձր մակարդակը, շուկայում դիրքերն ամրապնդելու և նոր հատվածներ նվաճելու համար ֆինանսների անբավարարությունը, ինչպես նաև կառավարման մարմինների անարդյունավետ գործողությունները:

Տնտեսապես զարգացած երկրները անչափ կարևորում են ընթացիկ սոցիալ-տնտեսական և բնակչության զբաղվածության ընդլայնման խնդիրների լուծման գործում փոքր և միջին կազմակերպությունների դերը: ՓՄՉ ոլորտը համարվում է առավել ռիսկային<sup>20</sup>, քան խոշորը, սակայն ի տարբերություն առաջատար երկրների փորձի, որտեղ ռիսկի մակարդակի այդ տարբերությունը փոխհատուցում է պետությունը՝ հենց դրանով նույն պայմաններն ապահովելով խոշոր ու փոքր բիզնեսի համար, նորանկախ երկրներում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցությունը դեռևս արդյունավետ չէ, հատկապես վարկավորման ոլորտում: Ներկա իրավիճակն այնպիսին է, որ մեկնարկային կապիտալի բացակայությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիության դժվարությունները նվազեցնում են ձեռնարկատիրական ակտիվությունը և չեն խթանում փոքր և միջին կազմակերպությունների զարգացմանը:

ՀՀ ՓՄՉ-ների համար զարգացման մեծ հեռանկարներ է պարունակում արտահանմանն ուղղված գործունեության իրականացումը: Արտահանման մեջ ՓՄՉ-ների տեսակարար կշիռը չի գերազանցում 18%, իսկ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 30-60%-ի սահմաններում:

Վերլուծելով միջազգային փորձը և հաշվի առնելով ՀՀ առանձնահատկությունները առաջարկում ենք ներդնել արտահանման նոր սլանսա: Նայա՝ պետք է ստեղծել պետական մասնագիտացված կառույց, որը կզբաղվի արտահանման և ներմուծման հիմնախնդիրներով: Հետո պետք է ստեղծվի արտահանման պետություն-մասնավոր խառը համակարգ: Այս համակարգը ենթադրում է, որ նույն յուրօրի ՓՄՉ սուբյեկտները պետք է ստեղծեն նոր ընկերություն, որի հիմնական բաժնետերը կլինեն իրենք, որտեղ կարող է մասնակցել նաև պետությունը: Նոր ընկերության համար կստեղծվի նոր ապրանքանիշ, որի արտադրությամբ կզբաղվեն հիմնադիր ՓՄՉ սուբյեկտները պայմանագրի հիման վրա՝ նախօրոք սահմանված չափորոշիչների համապատասխան: Պետությունը իր

<sup>19</sup> Stu Smallbone D. Internationalization of Markets and SME Development: some results from an international comparative study / The scientific journal Facta Universitatis, Series: Economics and Organization, Vol.1, No 6, 1998, էջ 13 –25, <http://facta.junis.ni.ac.yu/eao/eao98/eao98-02.pdf>

<sup>20</sup> Ств Иода Е., Иода Ю., Мешкова Л., Болотина Ф., Управлениепредприимательскими рисками – Тамбов. Издательство Тамбовского государственного технического университета, 2002, էջ 212

հերթին պետք է սահմանի արտահանման ստանդարտներ, մասնակցի նոր ստեղծված ընկերությունների համար աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման գործընթացներին, երաշխավորի վերջիններիս՝ արտադրանքի որակը, անհրաժեշտության դեպքում մասնակցի կանոնադրական կապիտալի ձևավորմանը:

ՓՄՁ ոլորտի վերաբերյալ վիճակագրության վարումը խիստ կարևոր է, որը թույլ կտա ունենալ ոլորտի իրական պատկերը և դինամիկան: Այժմ նման վիճակագրություն բացակայում է, կա միայն ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի, ՓՄՁ - ՋԱԿ-ի և Լոգիկոն ընկերության համատեղ փորձագիտական գնահատականները, որոնք 2001-2009թթ հրապարակվել են ՓՄՁ ՋԱԿ-ի տարեկան հաշվետվություններում: Որոշակի հակասություններ կան վերոհիշյալ հաշվետվությունների և 2013թ.-ին հրապարակված ռազմավարության մեջ տրվող գնահատականների միջև: Մասնավորապես, 2009թ-նի համար նշվում էր ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում է 42.5%, իսկ նոր ռազմավարության մեջ 34.3%, իսկ զբաղվածության մեջ 42.2, իսկ նոր ռազմավարության մեջ 33.5%: Երկու դեպքում էլ չի հրապարակվում այն մերոլոգիան, որի հիման վրա հաշվարկվել են այդ ցուցանիշները, ուստի անհնար է հասկանալ, որ թվերն են իրականությանը ավելի մոտ: Շատ ցավալի է, որ նույնիսկ այսօր չկա մանրամասն և իրական վիճակագրություն, որը թույլ կտա պատկերացում կազմել ՀՀ-ում ՓՄՁ դաշտի վերաբերյալ:

Ուստի առաջարկվել է մշակել տեղեկատվական, վիճակագրական համակարգ, որը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում ունենալ ՓՄՁ-ների զարգացման վերաբերյալ և թույլ կտա գնահատել վերջիններիս զարգացման դինամիկան, ինչպես նաև պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը ՓՄՁ զարգացման գործում: Այս դեպքում մեզ անհրաժեշտ կլինի ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի, զբաղվածության, ներմուծման և արտահանման, վճարված հարկերի, ներդրումների, ինչպես նաև պետության կողմից իրականացված գնումների մեջ: Այն նաև պետք է ցույց տա ՓՄՁ-ների «կյանքի» միջին տևողությունը, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի տեսակարար կշիռը նոր ստեղծված, փակված և գործող կազմակերպությունների մեջ:

Բացի վերոհիշյալ ցուցանիշներից կարևոր է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ռեսեստրում գրանցված կազմակերպությունների ամբողջական տվյալների առկայությունը, մասնավորապես՝ ֆինանսական հաշվետվությունները, շրջանառության ծավալները (բնւղեն և դրամային արտահայտությամբ), աշխատակիցների միջին ցուցակային թիվը, վճարված հարկերը, արտահանման և ներմուծման տեսակարար կշիռը ընդհանուր արտադրանքի մեջ, թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների միջին տարեկան գնանը և այլն:

Անհրաժեշտ է նաև ներդնել հեռախոսային և առցանց խորհրդատվության համակարգ: Նման համակարգը հնարավորություն կտա առավել օպերատիվ արձագանքել ՓՄՁ սուբյեկտների համար ծագած խնդիրներին, առանձնացնել այն հարցերը, որոնք անհասկանալի են ՓՄՁ սուբյեկտների համար, այն խնդիրները, որոնց առավել հաճախ են բախվում, ինչը հնարավորություն կտա միշտ ժամանակին կանխարգելել նոր առաջացող մարտահրավերները: Որոշակի ժամանակ հետո հնարավոր կլինի ձևավորել հաճախ տրվող հարցերի ցանկ, որը կտեղադրվի

համացանցում ու հնարավորություն կտա ՓՄՉ սուբյեկտներին գտնել իրենց հուզող հարցերի պատասխանը, առանց խօրհրդատվության դիմելու:

Առաջարկվել է ներդրել «ընտանեկան ձեռնարկատիրություն» իրավական հասկացությունը, որի մեջ կնեղառվեն այն տնտեսվարող սուբյեկտները, որի բոլոր մասնակիցները մեկ ընտանիքի անդամներ են և չեն օգտագործում ներգրավված վարձու աշխատուժե: Ընտանեկան ձեռնարկատիրությունը կտարբերվի անհատ ձեռնարկատիրությունից, քանզի տնտեսական գործունեություն իրականացնում են ընտանիքի բոլոր անդամները և չեն կարող ներգրավել աշխատուժ, իսկ տնտեսական ընկերություններից, որ չեն կարող ներգրավել վարձու աշխատուժ:

Այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք համապատասխանում են ընտանեկան ձեռնարկատիրության չափորոշիչներին պետք է տրվեն ամենաարտոնյալ պայմանները տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Նման տնտեսվարող սուբյեկտներ կարող են համադրվել հուշանվերների խանութ-արհեստանոցները, արհեստանոցները, դասընթացները, հյուրատները, ընտանեկան թեյարանները, սրճարանները, ուղևորափոխադրման և բեռնափոխադրման ծառայություն մատուցող փոքր ընկերությունները, գյուղացիական տնտեսությունները, ինքնագրավածները, ուսումնական ծառայություն մատուցող անհատները, մաքրման և վերանորոգման ծառայություն մատուցողները և այլն: Այս քայլ թույլ կտա կրճատել ստվերը, կոռուպցիոն դրսևորումները վերոհիշյալ գործունեության ոլորտներում, իրականացնել պատշաճ հաշվառում և նպաստել այս ոլորտի զարգացմանը:

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում հեղինակն ընդհանրացրել և ամփոփել է հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ներկայացված են հետևյալ դրույթներով.

1.Մեր հանրապետությունում որոշակի հաջողություններ են գրանցվում ապրանքային շուկաներում տնտեսավարող սուբյեկտների գերիշխող դիրքի չարաչափման և անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխման կամ վերացման հարցերում, սակայն հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն ու ապացուցումը և չարտոնված համակենտրոնացումների արգելումը դժվարագույն և, կարծես թե, ներկայիս դրությամբ անուժելի թվացող խնդիր է մեր հանրապետության իսկանմաշնոցիային մարմինների համար երևույթներն ինքնին չափազանց բարդ են և առկա է փորձառության ու Իրավաբար իրավասությունների պակաս:

2.Առաջարկվել է անբարեխիղճ մրցակցության կանխարգելման նպատակով «Գովազդի մասին», օրենքում կատարել փոփոխություններ: Պետք է գովազդի ժամանակ արգելել անդեմ համեմատությունները և այն ապրանքանիշների գովազդը, երբ մեկ ապրանքանիշի տակ արտադրվում են մի քանի ապրանքներ, որոնցից գոմե մեկի գովազդը արգելված է:

3.Ժամանակակից պայմաններում մասնագիտական գրականության մեջ քննարկված տեսություններում առկա են ձեռնարկատիրության և ձեռնարկատիրոջ գործառույթների մեծ թվով բնորոշումներ, ինչը պայմանավորված է ձեռնարկատիրական գործունեության բազմաբնույթ և բարդ բնույթով, ինչպես նաև տարրեր երկրներում ու տարածաշրջաններում ավանդույթների, կուլտուրայի, քաղաքականության և գործակալում քիզմեսի գարգացման տարբերություններով: Բայցևայնպես, ձեռնարկատիրական գործունեության հիմնական բնութագրիչներ են

տարբերակվել ինքնուրույնությունը և անկախությունը, գործունեության արդյունքների և ընդունվող որոշումների համար պատասխանատվությունը, բարձր ռիսկի պայմաններում գործունեությունը, առևտրային հաշվարկով գործունեություն իրականացնելու կողմնորոշումը, նախաձեռնողականությունը, նորարարությունը:

4. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ դիտարկված երկրներում հակամրցանաչափային քաղաքականության անցկացումը և հակամրցանաչափային օրենսդրությունը լայն զարգացում են ստացել, իսկ ամենակարևորը, որ մրցանաչափների և դրանց բացասական հետևանքների հսկողության մեխանիզմը հաջող է գործում երկար տարիների ընթացքում: ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի երկրների հակամրցանաչափային օրենսդրությունները, չնայած սկզբունքորեն չաա հարցերում տարբերվում են միմյանցից, սակայն տնտեսապես հիմնավորված են, որը պայմանավորում է նրանց մասնակիորեն օգտագործման հնարավորությունները Հայաստանի հակամրցանաչափային քաղաքականության ձևավորման և զարգացման բնագավառում:

5. Փոքր և միջին բիզնեսի բնորոշման վերլուծված չափանիշները տարբերվում են ոչ միայն ըստ երկրների, այլև երկրների ներսում՝ ըստ գործունեության ձևերի ու հիմնական տնտեսական ցուցանիշների: Ուստի, ցանկացած բնորոշում տրվում է գործնական կարիքներից կախված և ծառայում է որոշակի նպատակների: Չնայած դասակարգման չափանիշների միջև նկատված տարբերություններին, գոյություն ունեցող բնութագրությունները հնարավորություն են ընձեռում տարբերակել փոքր և միջին բիզնեսը՝ որպես հետազոտման օբյեկտ, ինչպես նաև պարզաբանել ժամանակակից տնտեսության մեջ վերջինիս դերը:

6. Փոքր և միջին կազմակերպությունների գործունեությունն իրականացվում է հիմնականում հայրենական շուկայում, հետևաբար առկա հիմնախնդիրների լուծումն անհրաժեշտ է իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, որոնք որպես պետական իշխանության տարածքային մարմիններ պետք է որոշեն ձեռնարկատիրության օժանդակության հիմնական ուղղությունները, մշակեն միջոցառումների համալիր և փնտրեն դրանց իրացման նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ:

7. ՏՄՊՊՀ-ն ինքն է ընտրում այն ոլորտները, որոնք պետք է վերլուծվեն տվյալ տարվա գործունեության ընթացքում: Հաշվի առնելով այս հանգամանքը առաջարկվել է հաստատել սոցիալական կարևորություն ունեցող ոլորտների ցանկը, որոնք յուրաքանչյուր տարի պետք է վերլուծվեն ՏՄՊՊՀ-ի կողմից և բացահայտվեն զարգացման միտումները:

8. Այսօր ամենավաղը մարտահրավերներից մեկը ՏՄՊՊՀ-ի համար տեղեկությունների ստացումն է: Տեղեկատվության հետ կապված ՏՄՊՊՀ-ի խնդիրները լուծելու համար նպատակահարմար է համարվել դրա ավելացումը այն մարմինների ցուցակում, որոնք «տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ունեն ստուգումների անցկացման իրավունք:

9. ՓՄՁ-ների զարգացման նոր հնարավորություններ ստեղծելու համար, առաջարկվում է, որ խոշոր տնտեսվարող սուբյեկտներին արգելվի զբաղվել ուղղահայաց ինտեգրման որևէ գործունեությամբ, զենի ՓՄՁ սուբյեկտներ, զբաղվել գործունեությամբ, որը իր արտադրատեխնոլոգիական և կազմակերպական

առանձնահատկություններով, հնարավոր է իրականացնել գերփոքր և փոքր ընկերությունների չափորոշիչների պայմանում: Պետք է սահմանել, որ խոշոր ընկերությունների մասնակիցները չեն կարող ունենալ որևէ մասնակցություն ՓՄՁ սուբյեկտներում: Բացառություն կարող են հանդիսանալ այն գերփոքր և փոքր ընկերությունները, որոնց արտադրանքի կամ մատուցված ծառայությունների մեծ մասը արտահանվում է: Իսկ արդեն գոյություն ունեցող ընկերությունների համար կարելի է սահմանել ժամանակացույց, որպեսզի վերջիններս ունենա հնարավորություն վերածվելու արտահանող ընկերությունների կամ վաճառվեն:

10. Առաջարկվել է ձևավորել վիճակագրական տեղեկատվական համակարգ, որը իր մեջ կներառի՝

ա) գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ռեստրում գրանցված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները, շրջանառության ծավալները (բմեղեն և դրամային արտահայտությամբ). աշխատակիցների միջին ցուցակային քիվր, վճարված հարկերը, արտահանման և ներմուծման տեսակարար կշիռը ընդհանուր արտադրանքի մեջ, թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների միջին տարեկան գնաճը և այլն:

բ) ՓՄՁ-ների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի, զբաղվածության, ներմուծման և արտահանման, վճարված հարկերի, ներդրումների, ինչպես նաև պետության կողմից իրականացված գնումների մեջ: Այն նաև պետք է ցույց տա ՓՄՁ-ների «կյանքի» միջին տևողությունը, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի տեսակարար կշիռը նոր ստեղծված, փակված և գործող կազմակերպությունների մեջ:

11. ՏՄՊՊՀ-ն իր լիազորությունների շրջանակներում պետք է իրականացնի նաև սպառողների պաշտպանության ոլորտի կարգավորումը:

12. Մշակվել է արտահանման պետություն-մասնավոր խառը համակարգ, որտեղ ՓՄՁ սուբյեկտները միավորվելով ստեղծում են նոր ընկերություն և նոր ապրանքանիշ: Նոր ստեղծված ընկերության համար արտադրանք թողարկում են հիմնադիրները, պայմանագրի հիման վրա և մախօրթը սահմանված չափորոշիչներին համապատասխան: Պետությունը իր հերթին սահմանում է արտահանման ստանդարտներ, կատարում է ներդրում նոր ստեղծված ընկերության կանոնադրական կապիտալում և երաշխավորում վերջիններիս կողմից թողարկված արտադրանքի և մատուցված ծառայության որակը՝ բացթողումների պարագայում կրելով համապատասխան պատասխանատվություն: Պետական օժանդակության և պետական գնումների նկատմամբ վերահսկողությունը դիտարկվում է մրցակցային քաղաքականության մի մաս, և առաջարկվել է այն ևս վերապահել ՏՄՊՊՀ-ին:

13. Առաջարկվել է ստեղծել ընտանեկան բիզնես իրավական հասկացությունը, որի մեջ կներառվեն այն բիզնես միավորները, որոնք չեն օգտագործի վարձու աշխատուժ և որի բոլոր մասնակիցները կլինեն մեկ ընտանիքի անդամներ:

***Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատություններում.***

1. Բցյան Ա.Շ. «ՀՀ տնտեսության կենտրոնացվածության վերլուծություն», «Ֆինանսներ և էկոնոմիկա» Գիտական հանդես, 1(151)2013, հունվար 2013թ., էջ 9-11:

2. Բջյան Ա.Շ. «Փոքր և միջին բիզնեսի տեղը տնտեսական համակարգում և դրա զարգացման վերլուծություն», «Ֆինանսներ և Էկոնոմիկա» Գիտական հանդես, 1(151)2013, հունվար 2013թ., էջ՝ 12-14:

3. Բջյան Ա. Շ. «Հակամենաշնորհային քաղաքականության բարելավման հիմնական ուղղությունները ՀՀ-ում», «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հանդես հասարակական գիտություններ, 3/2010, էջ՝ 56-60:

4. Բջյան Ա. Շ. «Գերիշխող դիրքը շուկայում և անբարեխիղճ մրցակցության դրսևորման ձևերը ՀՀ-ում», «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հանդես հասարակական գիտություններ, 3/2010, էջ՝ 51-55:

**Регулирование конкурентной среды в экономике как важнейшее средство развития малого и среднего бизнеса (по материалам РА)**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 30-го мая 2013 года, в 14<sup>00</sup> часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбадяна 128.

**РЕЗЮМЕ**

Рыночные отношения, какими бы либеральными не являлись, нуждаются в вмешательстве государства и регулировании прямыми и косвенными методами. Регулирование конкурентной среды в экономике способствует развитию экономической конкуренции и, в общем, процессу экономического развития, формированию цивилизованного рынка, обеспечению добросовестной конкуренции, а также защите прав и интересов потребителей.

В контексте политики обеспечения стабильного экономического роста в Армении развитие сферы малого и среднего предпринимательства (МСП) призвано обеспечить стабильность экономического роста страны путем придания экономике новаторской направленности и гибкости. В этой связи сфера МСП своими особенностями и возможностями оказывает значительное влияние на равномерное социально-экономическое и региональное развитие страны.

Благодаря процессу проведенной приватизации в РА, государственной поддержке и спонсорству, целый ряд хозяйствующих субъектов занял доминирующее положение, которым часто злоупотребляет в своих интересах.

При нынешних условиях рыночной экономики выделяются различные формы проявления неконтролируемой концентрации товарных рынков, ценовой дискриминации, теневой деятельности, недобросовестной конкуренции между импортерами и местными компаниями, антиконкурентных соглашений, монополии и недобросовестной конкуренции, которые существенно препятствуют повышению эффективности развития МСП.

Вышеуказанными положениями обуславливается актуальность и значимость темы диссертации.

Цель диссертации - изучение влияния регулирования среды экономической конкуренции на развитие малого и среднего предпринимательства и разработка новых предложений по развитию МСП.

Для достижения указанной цели в диссертации были поставлены следующие задачи:

- выявить сущность экономической конкуренции, формы проявления и особенности;
- изучить факторы влияющие на конкурентную среду экономики;
- дать сравнительную характеристику малому и среднему предпринимательству и провести сравнительный анализ применяемых за рубежом классификационных показателей;
- изучить международный опыт защиты экономической конкуренции и оценить возможности его применения в РА;
- выяснить социально-экономическое значение и особенности малого предпринимательства;
- выявить в современных условиях особенности финансирования субъектов сверхмалого, малого и среднего предпринимательства и механизмы оказания им содействия;
- проанализировать основные приоритеты повышения конкурентоспособности экономики РА и предложить основные направления регулирования среды экономической конкуренции;
- предложить новые подходы к вопросу развития малого и среднего предпринимательства.

Из основных результатов диссертационного исследования научная новизна заключается в следующем:

1.предлагается ограничить любую деятельность в рамках вертикального интегрирования крупных хозяйствующих субъектов, заняться деятельностью, осуществление которой по производственно-технологическим особенностям возможно реализовать субъектами, которые по своим стандартам соответствуют параметрам сверхмалых и малых предприятий;

2.разработана смешанная система “государство - частный сектор”, где государство внесет вклад в уставный капитал новосозданной компании, проконтролирует обеспечение соответствия качества продукции международным стандартам, субъекты-учредители МСП осуществят выпуск продукции или предоставление услуг, а новосозданная компания будет ответственна за всю деятельность, связанную с экспортом товаров и услуг;

3.предложено ввести юридическое понятие “семейное предпринимательство”, включающий те бизнес-единицы, которые не используют наемный труд, и все участники которой являются членами одной семьи;

4.предложено сформировать статистическую информационную систему, включающую в себя отчетность (по объемам оборота (в натуральном и в денежном выражении), среднесписочной численности работников, уплаченным налогам, удельному весу экспорта и импорта в общем объеме производства и т.д.) организаций, зарегистрированных в реестре хозяйствующих субъектов, занимающих доминирующую позицию на рынке, и полную всестороннюю информацию о МСП (в отношении удельного веса в ВВП, занятости, экспорте и импорте, уплаченных налогах, инвестициях, а также произведенных государством закупках)



**Regulation of the Competitive Economic Environment as the Most Important Tool for Small and Medium Enterprises (based on the materials of the Republic of Armenia (RA))**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 'Economics, Management of the Economy and its Branches'.

The defence of the thesis will take place on May 30<sup>th</sup>, 2013 at 14<sup>00</sup> o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 M.Nalbandyan str., Yerevan, RA, 0025.

**Abstract**

Market relations, no matter how liberal they are, need state intervention and regulation by direct and indirect methods. Regulation of the competitive economic environment fosters economic competition development and economic development process, in general, formation of a civilized market, provision of fair competition and protection of consumer rights and interests.

In the context of policy for provision of sustainable economic growth in Armenia, development of small and medium enterprises (SMEs) is called forth to ensure the country's economic growth by making the economy innovative and flexible. In this regard, the sphere of SME with its specific features and capabilities has a significant impact on the homogeneity of the socio-economic and regional development of the country.

Through the process of privatization in the Republic of Armenia, the state support and sponsorship, a number of business entities have occupied a dominant position in the market, which is often abused in their own interests.

The current market conditions identify various forms of uncontrolled concentration of commodity markets, price discrimination, underground shady activities, unfair competition between importers and local companies, anti-competitive agreements, monopoly and unfair competition, which significantly hamper the effectiveness of SME development.

The urgency and importance of the subject of the thesis are stipulated by the aforementioned provisions.

The thesis is aimed at studying the impact of the regulation of the competitive economic environment on the development of small and medium enterprises, as well as elaborating new proposals for its development.

To this end the thesis was aimed at achieving the following objectives:

- to identify nature of economic competition, ways of its understanding and peculiarities
- to study the factors influencing the environment of economic
- to make a comparative analysis of small and medium enterprises and conduct a benchmarking study for rating applied abroad;

- to study the international practice in protection of economic competition and evaluate the possibility of its application in the Republic of Armenia;
- to determine the socio-economic importance and characteristics of small enterprises;
- to identify ultra-small, small and medium enterprises in current conditions and the mechanisms for their assistance;
- to analyze the main priorities for increasing the competitiveness of the RA economy and offer principal directions in regulation of the economic competition environment;
- to suggest new approaches to the development of small and medium enterprises.

The scientific novelty of the main results of the thesis is as follows:

1. it is proposed to limit any activity within the vertical integration of large business entities, to get involved into the activities the implementation of which due to its production and technological features is possible for realization by business entities, which according to their standards meet the characteristics applicable to ultra-small and small enterprises;

2. a mixed system of 'state - private sector' has been developed, according to which the state will be assumed to make contribution to the charter capital of the newly established company, check the compliance of products with international quality standards, SMEs founders will be assumed to carry out production or to ensure provision of services, and the newly established company will be responsible for all activities related to export of goods and services;

3. it is suggested introducing a legal definition for 'family business', including those business units that do not use hired labor, and all the members of which are members of the same family;

4. it is proposed to develop a statistical information system, which will contain statements (on turnover volumes (in kind and in money terms), the average number of employees, paid taxes, share of exports and imports in total production, etc.) made by organizations registered in the register-book of economic entities with dominant position in the market and a complete comprehensive information on SMEs (in relation to the share in GDP, employment, exports and imports, paid taxes, investments, as well as in public purchases).

